

և մեծամեծ քարեր հարիւր կամ երկու հարիւր գուցէ և աւելի փթի չափ ծանրութեամբ, որով փակեց հասարակաց ջրի ընթացքը փոխելով ուղղակի քաղաքի վերայ. 2. Թեմնուին այս ահռելի վայրկեանները որ մայրերը իւրեանց որդիքը զրկած փողոցից փողոց շնչասպառ կաճապարէին իւրեանց տները. նոյն միջոցին աղաղակ և ճիչ բնակչաց Շահարի անպատմելի էր և նորան արձագանք կտար միայն երկինք իւր տխուր որոտմունքներով. 2. այնքան անդադար չէին լսել այսպէս տեսլով փախէք փախէք ահա հեղեղը գալիս է, և գոցցես մի ակնթարդի մեջ ողորկեց քաղաքի երեք մասն, և այս մասերի շատ տներ և շէնքեր Նոյեան տապան ձեռացան ջրի երեսին և շատերը բոլորովին յուսահատ իւրեանց գոյքը և կարասիքը և ամեն մէկ հարստութիւնները աղատելուց, կիտութային միայն իւրեանց որդուց և ընտանեանց օգնելու՝ ոմանց բարձրացնելով ծառերի վերայ, և ոմանց տանիքների վերայ, և այսպէս կապահովէին իւրեանց զաւակները և զերգաստանները. 3. երկու անխնայ զոհեր էր բերում, թէ մարդ՝ թէ անասուն և թէ զոյք և կարասիք, և անցնում էին ջրի երեսից մեծամեծ արկըղներ և պղնձեղէններ և շատ գորգեր, որոնցով ամրացնում էին իրենց դռները, որ ջրեր չթափուին ներս տների մէջ. 4. Եւրաքանչիւր դրան առաջ վերմակներ, անկողիններ անխնայ ձգուած ջրի երեսին շատերը կեցած և ծածկուած տղմերով ջրի մէջ և շատերը սուզելով անցնում էին դէպի քաղաքի հրապարակները. 5. Եւրը անցնում էր նոյն սաստկութեամբ մինչև 4 ժամ. հարիւրաւոր ներս ծուռ և երբեմն լայն և երկայն արբունի փողոցներից:

Այս տխուր տեսարանին ի՞նչ շտապով կիտութային մեծ և փոքր իշխան և հասարակ անձինք համարեա թէ կիտով չափ մերկացած ջրի մէջ՝ երբեմն սուզելով՝ երբեմն լողալով և երբեմն գլորվելով կիտութային օգնութիւն իւրեանց հարազատներին. Ծնողներ՝ որոնք չէին գտնում ընտանեաց կամ որդուց մէկին, նոյն ժամայն կայծակի պէս դուրս նետուած կորոնէին իւրեանց որդիքը լայով և աղաղակելով փողոցից փողոց, կարծելով թէ իրենց որդիք կամ ընտանիք ընկղմած լինին ջրի մէջ, և հետզհետէ կարծրանար լայն և ա-

ղաղակի ձայներ հարիւրաւոր տներից և շատ փողոցներից, որ չէր պակաս հեղեղի ձայնից. Մայրեր, որդեակներ կլային, և գեռահաս մանուկներ իւրեանց մայրեր, ոմանք ձեռքները կուրծքներին զրած սրտերի խորքերից հառաչանքներ կարձակէին իւրեանց հարազատներին համար, կէսք կը փետէին իւրեանց գլխների հերքեր, և վայ կուտային գլխներին, և շատերը ծնկներին զարկելով ուշաթափ երկիր կանկանէին, միայն այս և այսպիսի հառաչանքներով, ո՛հ, որդեակ, ո՛հ, մայրիկ և վայ քոյրիկ, Ի՞նչ սիրտ և ի՞նչ հոգի կարող էր անտարբեր մնալ այս թշուառ և ողորմելի տեսարանի մէջ, և ո՞վ կարող էր արդեօք մխիթար հանդիսանալ սրդեկորոյս ծնողաց, բայց և այնպէս կանկարանային անգամ մերձաւոր ազգականները մէկմէկու օղնելու՝ երբ նոյն վտանգի մէջ էր գրտնում իւրեան և իւր ընտանեաց:

Այս հեղեղը զո՛հ ունեցաւ Նորգայ այգիների մէջ մէկ այր ծերունի, և մէկ կին, իսկ Շահարումը մէկ տուն երեք ընտանիքով, մէկ ծերունի և նորա կինը և նորա տանն ետթնամեայ կոյս օրիորդը, որոց երեքի զիակները գտնուեցան ոչ այնքան հեռու մէկմէկուց, թէ և զանազան փողոցներում, մօտ Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյն, բայց մերկ և անհագուստ բոլորովին. Այս հեղեղից խեղդուածների և մեռածների թիւը հասնում է 17, թէ Հայ, և թէ այլազգ, որոց վեցն Հայ են, իսկ ինն Տաճկ:

Քաղաքի վնասն ոմանք հաշվում են 150,000, և ոմանք 200,000 և շատերը կէս միլիոն մանեթ ասում են. եթէ այժմ չէ հասնում վնասն 500,000ի՝ բայց շուտով կգերազանցէ այս գումարից, որովհետեւ գեռ հարիւրաւոր տներ կան կիտակործան և հետզհետէ կործանվելու և քանդուելու վրայ են, և հարիւրից վեր տներ այս երեք մասի մէջ իսպառ ոչնչացած են, և շատ այգիներ քարերով լցուած և մէկ քանիսը իսպառ աւերակ դարձած:

Այս հեղեղը յառաջ է եկել անձրևախառն կարկտից, որ շատ քանակութեամբ զիղուել է Պոտայից արևելեան հարաւ եղած լեռների ստորոտներումը և մէկ քանի գիւղերի յանդերումը այս ինքն Գեւորիտի, Գեւորիտի, Գեւորիտի և Ար-

մասնաւոր եւ պատմութիւնն բնակիչները՝ թէ կար-
կաների մեծութիւնը հասկնալի չափ և երբեմն մեծ
սառուցի կտորներ վայր էին թափում այնպիսի
սաստիկութիւնով, որ դաշտումը ցանուած շատ
անասուններ և հարիւրաւոր ոչխարներ ոչնչացել էին
այս յիշեալ գիւղերում և նոցա շրջակայքերում:

Այս հեղեղի ջրերը իւրաքանչիւր փողոցնե-
րից վաղելով աջ և ձախ աւերելով և քանդելով
զանազան փողոցներում կմիանային և կանցնէին
քաղաքի հասարակաց մեծ պարտիզից և մեծ հը-
րապարակից, և երեք վերստ հեռաւորութեամբ
արուարձաններից քաղաքիս Զարբաղէ, և ներքին
Շէնքաղէ ձորակի միջից անցնելով՝ ուղղակի
դէպի Ուրխաղէ գիւղը Տաճկաց, և քիչ սորա-
նից հեռու Հրազդան գետն կթափի զանազան բե-
րաններով՝ որ Երևանից 15 վերստ հեռաւորու-
թիւն ունի:

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆՆԵՐ:

1875 - 28 - ն Օգոստոսի

յերեւան:

ԱՐԻՒՆԵԱՆՑԻ ՆՈՒՆԻՐ

Խոթագրութեան Արարատ Ամառայնայ.

Նա կարգացի խորին աշխարհութիւնով՝ ներկայ
տարւոյս Յուլիս ամսուայ Արարատ քաղաքի անստեղծ
ամսագրի թերթերի մէջը զետեղուած բազմատա-
ղանդ ծերունի Պ. . . Գարրիէլ Պատկանեանցի
յօրինած իմաստայից յօդուածն, իսկոյն համո-
զուեցայ դէպի նորա արդարացի դրուածներն,
որի մասին արդարեւ ամենայն վիճակում բաց ի
պաշտօնական գործով զբաղուած հոգևորական-
ներիցն, կան ևս հոգևորականներ և վարժապետ-
ներ, որք եթէ կամովին չկափուցին իւրեանց տե-
սարաններ և չկայնուն իւրեանց բնիկները, եղևալ
ազգապարճանք լուրերն կարող են հաղորդել Ա-
րարատայ Խմբագրութեանը ի հրատարակութիւն և
ի խրատուութիւն մեր համագրեաց սիրելիներին.
ահա՛ ես իմ լածները և տեսածները ազատ պա-
հելով այն կամեակոր իրողութիւններէն՝ կցանկամ
յատնել մեր ազգապարճանք Արարատայ Խմբագրու-
թեանը մի հաւաստի լուր, թէ՛ Նուխարագաքա-
ցի այժմ վերաբնակուող ի Տիփլիս քաղաքի պա-

տուաւոր և ազգասէր վաճառական Պարոն Գա-
րիթն Արխիպեանց, հերուն հետէ թէ և շարժուած
էր իւրեան վառվառն և ջերմ եւանդովը Նուխոց
վիճակում մի Աստուածաճաճոյ ձեռնարկութիւն
սկսանել, սակայն չլինելով մի սկզբնապատճառ
յիշեալ ազգասէր անձի, նորա օգտաւէտ իղձն և
յօժարակամ փափազն կմնար անկատար իւր
բնական եւանդոտ օրտի յանդաստանի խորշերումն
ծածկուած. իսկ մեր այժմեան Փոխանորդ Բարե-
շնորհ Վարդապետ Մուրատեանցը ըստ ամենայնի
համաձայն մեր օրդեսէր Աստուածընտիր Վեհա-
փառ Գէորգայ Գրդ Վաթուղիկոսի Հայրախնամ
ուսումնասէր և մեծագործ Սուրբ կամացն, ուս-
տի փոյթ կալաւ իւրեան վերայ անխուսափելի
պարտաւորութիւն համարե ով, քահանայապատ-
շած ազգու սրտառուչ համոզանքով ստացաւ
յիշեալ Պարոն Արխիպեանցէ երեք հարիւր բուր-
լի դրամ, և իւրեան քրտնաջան յատուկ վերա-
հասութիւնով անցեալ 1871 ամին վերանորո-
գել տուաւ ճակնութու առաքելաշէն կառուցեալ
յանուն սրբոյն Աստուածածնայ վանքի հոյակապ
Ուսումնարանի թերթութիւններն, որ ազգասէր
անձինքներն երբ կտեսնէին նոյն դպրոցի դրու-
թիւնը՝ նորանց քնքուշ օրտերը ձեւուիլ կսկսուէր,
որ ահա փառք Աստուծոյ զկնի աւարտելոյն նոյն
վանքի դպրոցի թերթի շինութիւնը, արդէն նոյն վան-
քումն կայ Վանահայր Մայր Աթոռոյ բնիկ միա-
բան Եղիշէ Վարդապետն Ամատունի, և ունի
քսանաչափ Հայ մանկտի աշակերտներ, և կու-
սուցանէ նոցա իւրեանց Մայրնի լեզուի գրա-
կանութիւնը, և յոյս կայ առաւել ևս ճոխանան
նոյն դպրոցի աշակերտներն յուսումն, ի յաւեր-
ժական յիշատակ նոյն Պարոն Արխիպեանցին:

Ուստի այս իմ հակիրճ յօդուածս ուղղե-
լով դէպի յարգոյ Արարատ ամսագրի Խմբա-
գրութիւնը և խնդրեմ խոնարհարար տեղի տայ
իւր պատուական թերթերի մէջը հրատարակել
այս սակաւաքանակ գրուածս ի լուր և ի գիտու-
թիւն մեր բարեմի ազգայնոց, կցորդումեմ և
այս էլ թէ երբ որ տեսի հրատարակուած այս
իմ զուգնաքեայ յօդուածս, այն ժամանակն ես
պատրաստի եմ ու համոզուած իմ գրիչս ձեռքս
վեր առած առանց ձանձրանալոյ գրել և հաղոր-